ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Կապանի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար Արծվանիկ բնակավայրի ջրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-24/03» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի հունիսի 21-ին կնքված N «ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-24/03» ծածկագրով պայմանագրի 2024 թվականի դեկտեմբերի 20-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ Պայմանագրով սահմանված ժամկետում նախատեսված աշխատանքների չկատարում:

Փոփոխության նկարագրություն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետի երկարաձգում, համաձայնագրի կնքում

Փոփոխության հիմնավորում՝ Գնումների մասին ՀՀ օրենսդրություն, 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 4-րդ ենթակետ, կնքված պայմանագրի 8.5, 8.6 կետեր:

Պատվիրատու՝ Կապանի համայնքապետարան

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
Արծվանիկ բնակավայրի ջրամատակարարման համակարգի բարելավման
աշխատանքների կատարման
«21» հունիս 2024թ. կնքված N «ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-24/03»
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Կապան « 20 » դեկտեմբեր 2024թ.

Կապանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի, որը գործում է ՏԻՄ օրենքի և կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Արտ Պլաս>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Աննա Սարգսյանի, որը գործում է ՍՊԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին, հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 4-րդ մասը, հաշվի առնելով Կապալառուի 11.12.2024թ. թիվ 001/391 գրությունը և համաձայն պայմանագրի 8.5 և 8.6 կետերի, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Սույն Համաձայնագրի առարկա է հանդիսանում պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետի փոփոխությունը:

1.2.Աշխատանքների կատարման վերջնաժամկետ է հանդիսանում 2025թ. Հունվարի 20-ը:

1.3.Պայմանագրի Օրացուցային գրաֆիկը /Հավելված 2/՝ համաձայն սույն Համաձայնագրով նախատեսված փոփոխությունների:

1.4.Պայմանագրի Վճարման ժամանակացույցը/Հավելված 3/՝ համաձայն սույն Համաձայնագրով նախատեսված փոփոխությունների:

1.5.Պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ:

2. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Կապանի համայնքապետարան	<<Արտ Պլաս>> ՍՊԸ
Ք. Կապան, Չարենցի 1	Արարատի մարզ, գ. Շահումյան,
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Արցախի 5
ՀՀ 900312000301	ԱԿԲԱ ԲԱՆԿ Արարատ մ/Ա
ՀՎՀՀ 09426088	ՀՀ 22001333365700
	ՀՎՀՀ 04225743
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ